**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

20 մայիսի, 2021թ.

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 41-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապտության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) ներքոստորագրյալ պատգամավորներս Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին

***առաջարկում ենք***

- այսօր՝ 2021թ. մայիսի 20-ին, ժամը 18:00 գումարել Ազգային ժողովի արտահերթ նիստ.
- օրակարգում ընդգրկել հետևյալ հարցը՝
  - *«2021 թվականի մայիսի 12-ից Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտման, Հայաստանի Հանրապետության նկատմամբ ուժի կիրառման արդյունքում առաջացած իրավիճակում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող գործողությունների մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագիծը:*

Արտահերթ նիստը նախաձեռնողների ներկայացուցիչն է Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը:

Կից ներկայացվում են՝

– «2021 թվականի մայիսի 12-ից Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտման, Հայաստանի Հանրապետության նկատմամբ ուժի կիրառման արդյունքում առաջացած իրավիճակում Հայաստանի

Հանրապետության կառավարության կողմից իրականացվող գործողությունների մասին» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը.

– Ազգային ժողովի խորհրդին միջնորդությամբ դիմելու մասին Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության որոշումը.

– Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի գրությունը՝ ուղղված Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին.

– «Հարցի քննարկումն առանց ժամային սահմանափակման կազմակերպելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (կներկայացվի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի կողմից):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

***Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր***

Մարուքյան Էդմոն Հրաչիկի ______________________ 126 ԼՀԿ

Գորգիսյան Գևորգ Սամվելի ______________________ 125 ԼՀԿ

Ալեքսանյան Սարգիս Ռոբերտի ______________________ 123 ԼՀԿ

Այվազյան Հրանտ Գնունու ______________________ 131 ԼՀԿ

Անդրեասյան Էդվարդ Հրաչի ______________________ 128 ԼՀԿ

Բաբայան Հարություն Վիլիկի ______________________ 118 ԼՀԿ

Բաղդասարյան Գուրգեն Նիկոլի ______________________ 124 ԼՀԿ

Գրիգորյան Սրբուհի Էդիկի ______________________ 122 ԼՀԿ

Եղիազարյան Արմեն Էդիկի ______________________ 119 ԼՀԿ

Խաչատրյան Արկադի Սանասարի ______________________ 116 ԼՀԿ

Կոստանյան Աննա Մայիսի ______________________ 120 ԼՀԿ

Մինասյան Սարիկ Սամվելի ______________________ 132 ԼՀԿ

Սամսոնյան Անի Տաճատի ______________________ 117 ԼՀԿ

Սիմոնյան Կարեն Մանվելի ______________________ 121 ԼՀԿ

Սիմոնյան Տարոն Վարդանի ______________________ 130 ԼՀԿ

Ստեփանյան Ռուբիկ Շահումի ______________________ 129 ԼՀԿ

Ստեփանյան Ստեփան Սամվելի ______________________ 127 ԼՀԿ

Նալբանդյան Արթուր Սեդրակի 082

Գրիգորյան Ռուբեն Սարգսի 084

Պողոսյան Կարինե 100

Էնֆիաջյան Լևոն 094

Աղաջանյան Արմեն 093

Արթուր Գրիգորյան 091

Տիգրան Ալեքսանյան 103

Ալեքսան Ալեքսանյան 101

Էդուարդ Բաբայան 109

Վարդան Վարդազարյան 102

Ջանիբեկ Հայրապետյան 111

Արթուր Պապիկյան 108

Ճավիկ Բաղդասարյան 098

Ռուզաննա Գոռոյան 095

Գրիգոր Սահակյան 107

Վահագն Գրիգորյան 113

Քաջիկ Գևորգյան 104

Հարություն Ղազանջյան 112

Հրաչիկ Կարապետյան 105

Մխիթարյան Լևոն 106

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

20 մայիսի, 2021թ.

# ՈՐՈՇՈՒՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տիրող լարված իրադրությունը և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտումը, ելնելով հարցի բացառիկ հրատապությունից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը

**Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Է**

Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված ժամկետից վաղ՝ այսօր՝ 2021թ. մայիսի 20-ին, ժամը 18:00:

Միաժամանակ, առաջարկում ենք Ազգային ժողովի խորհրդի նիստը հրավիրել այսօր՝ 2021թ. մայիսի 20-ին, մինչև ժամը 16:30:

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒԿՅԱՆ**

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am